ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հուլիսի 7-ից հուլիսի 13-ը ք.Բուդապեշտում (Հունգարիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Անի Աղաջանյան – ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալի օգնական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունգարիայի Հանրապետություն, ք.Բուդապեշտ հուլիսի 7-ից հուլիսի 13-ը

3. Հրավիրող կողմը՝

Եվրոպական Միության երկակի նշանակության ապրանքների արտահանման վերահսկման ծրագրի շրջանակներում ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Չտարածմանն ուղղված միջազգային արտահանման վերահսկման ծրագրի (INECP), Կանայք Ռազմավարական Առևտրում Նախաձեռնության (WIST), Միջազգային Գիտատեխնիկական Կենտրոնի (ISTC) համագործակցությամբ և Expertise France-ի գլխավորությամբ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել ԵՄ P2P ամառային համալսարանի ռազմավարական առևտրի վերահսկողության 10-րդ դասընթացին:

Դասընթացի ընթացքում ներկայացվել են ռազմավարական առևտրի վերահսկողության արդյունավետ իրականացման ԵՄ և միջազգային լավագույն փորձը, ընդհանուր մարտահրավերները և հնարավոր լուծումները, ռիսկերի նվազեցմանն ուղղված համագործակցության խորացման անհրաժեշտությունը, ռազմավարական առևտրի վերահսկման ոլորտում կանանց դերակատարման բարձրացմաննն ուղղված ջանքերը, ինչպես նաև ռազմավարական առևտրի վերահսկողության տնտեսական ազդեցությունը և վերջինիս կապը ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակում խաղաղության և կայունության ապահովման հետ:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. հուլիսի 7-ից 13-ը կայացած ԵՄ P2P ամառային համալսարանի ռազմավարական առևտրի վերահսկողության 10-րդ դասընթացի ժանանակ քննարկվել են հետևյալ թեմաները՝

- CBRN ռիսկերի նվազեցմանն ուղղված համագործակցություն,
- Օրենքի և արտահանման վերահսկման ծրագրի ստեղծում,
- ԵՄ առևտրի վերահսկման ծրագիրը Եվրոպական Տնտեսական Անվտանգության նոր հայեցակարգի շրջանակներում,
- ԵՄ էլեկտրոնային լիցենզավորման համակարգը,

- Լիցենզավորման համակարգի գործարկումը,
- Երկակի նշանակության ապրանքների նույնականացում,
- Արտահանման վերահսկման իրականացում,
- Ոչ նյութական արժեքների փոխանցում,
- Անցում ազատ առևտրից վերահսկվող առևտրի,
- Ռազմավարական առևտրի վերահսկման տնտեսական ազդեցության գնահատում,
- Ներքին համապատասխանության գնահատման ծրագրեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵՄ P2P ամառային համալսարանի ռազմավարական առևտրի վերահսկողության 10-րդ դասընթացին ԵՄ P2P փորձագետները՝ ներկայացրել են, ինչպես նաև քննարկումներ են ծավալվել 35 երկրների ներկայացուցիչների հետ մի շարք հարցերի շուրջ՝ սկսած «Առևտրի վերահսկման ռազմավարական համակարգերի ստեղծումից» մինչև «Լիցենզավորման համակարգի գործարկում», «Արտահանման հսկողության կիրարկում», «Ռազմավարական առևտրի վերահսկման տնտեսական ազդեցության» և «Ներքին համապատասխանության ծրագրեր»:

Դասընթացի ընթացքում մասնակիցները բաժանվել են աշխատանքային թեմատիկ խմբերի, քննարկվել են հետևյալ հարցերը՝ Տնտեսական անվտանգություն, առևտրի վերահսկման նոր գաղափար, Հետաքննություն և հետապնդում, Ռազմավարական առևտրի վերահսկման համակարգի գործարկում, Ռազմավարական առևտրի վերահսկման տնտեսական շահերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել և պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն կարևորում է Եվրոպական Միության երկակի նշանակության ապրանքների արտահանման վերահսկման ծրագրի կողմից կազմակերպվող դասընթացներին մասնակցությունը, ռազմավարական նշանակության ապրանքների առևտրի վերահսկողության ոլորտում փորձի փոխանակումը, քննարկումների անցկացումը, մասնավորապես՝ երկակի նշանակության ապրանքների առևտրի վերահսկողության համատեքստում:

Դասընթացին մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ երկակի նշանակության ապրանքների նույնականացման մասնակից երկրների, ինչպես նաև ԵՄ և միջազգային լավագույն փորձին՝ Պետական եկամուտների կոմիտում ներդնելու համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Անի Աղաջանյան

17.07.2024թ.